ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում մենք անդրադառնում ենք դասարան ներառված հատուկ կարիքներ ունեցող երեխաների ադապտացմանը, հուզական ոլորտի առանձնահատկություններին: Հոդվածում վեր են հանվում հոգեբանական այն գործոնները, որոնք խոչընդոտում կամ նպաստում են հանրակրթական դպրոցներում ուսումնառող հատուկ կարիքներ ունեցող երեխաների ադապտացմանը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հատուկ կարիքներ, ադապտացիա, օրգանական խնդիրներ, թերարժեքության զգացում, միջին նորմա, տոլերանտություն:

Այսօր հասարակության մեջ ուշագրավ տեղ է զբաղեցնում հատուկ կարիքներ ունեցող երեխաները և նրանց ուսուցման, ադապտացման գործընթացները դպրոցներում, որով էլ պայմանավորված է ուսուցման կազմակերպման յուրահատկությունները: Մեծ տարածում ստացած «հատուկ կարիքներ ունեցող երեխաներ» հասկացությունը տեսական հարթակից անցում է կատարել գործնականի, քանի որ այս երեխաները հաճախում են մանկապարտեզներ, դպրոցներ: Եվ այս պարագայում կարևոր հանգամանքը երկկողմանի հարմարումն է՝ աշակերտ–ուսուցիչ, աշակերտ–աշակերտ, ինչպես նաև համապատասխան մոտեցումների կիրառումը արդյունավետ ուսուցման համար: Իսկ ներառական կրթության կարևորագույն գաղափարը կայանում է նրանում, որպեսզի այս երեխաները ընդունվեն, չմեկուսացվեն, զգան իրենց հասարակության լիիրավ անդամ:

Հատուկ են համարվում այն երեխաները, որոնց զարգացումը «շեղվում» է այսպես կոչված «միջին նորմայից», որն էլ ժամանակի ընթացքում իր ազդեցությունն է թողնում նրանց ֆիզիկական ու հոգեկան առանձնահատկությունների ու որակների ձևավորման վրա: Պետք է նշել, որ հատուկը վերաբերում է ինչպես երեխային, այնպես էլ նրա կարիքներին: Այսինքն, հատուկ են նաև այս երեխաներին խնամելու, դաստիարակելու և ուսուցանելու պահանջներն ու կարիքները: Հատուկ են այս երեխաների ապրելու պայմանները, նրանց կենցաղային կարիքները և այլն: Հատուկ կարիքներով երեխաների նկատմամբ մոտեցումը ժամանակի ընթացքում մեծ փոփոխություններ է կրել. եթե առաջ նրանք ապրում ու դաստիարակվում էին հատուկ հաստատություններում, օրենսդրությամբ չէին ճանաչվում իբրև իրավահավասար քաղաքացիներ, նրանց հասարակական գործունեությունը սահմանափակ էր կամ նույնիսկ արգելված, ապա ներկայումս հատուկ կարիքներ ունեցող երեխաները առողջ երեխաների հետ համատեղ կրթություն ստանալու իրավունք ունեն և համարվում են հասարակության լիիրավ անդամներ: Ոչ հեռավոր անցյալում արդարացված էր համարվում այս տիպի երեխաներին տեղավորել հատուկ նրանց համար ստեղծված հաստատություններում, որոնք կոչված էին ապահովելու հատուկ դաստիարակություն և կրթություն՝ պատճառաբանելով, որ այս երեխաները իրենց

ավելի երջանիկ են զգում՝ գտնվելով «իրենց նմանների» հետ և«՝տառապում» են պայմանականորեն առողջ հասակակիցների հետ շփվելիս: Հիմնական թերությունն այն էր, որ անուղղակի կերպով խրախուսվում էր այս երեխաների մեկուսացումը և օտարումը իրենց ընտանիքներից, հասակակիցներից, ընդհանրապես հասարակությունից: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:[3]

Շատ հեղինակներ են անդրադաձել են հատուկ կարիքներ ունեցող երեխաների հոգեբանական խնդիրներն: Հայտնի ավստրիացի հոգեբան Ա. Ադլերի ուշադրությունը գրավեց այն փաստը, որ մարդիկ ունենալով այս կամ այն օրգան համակարգերի հիվանդությունները, ինչ-որ ձևով կարողանում էին հաղթահարել այդ թերությունները: Ա.Ադլերը կատարել է կարևոր եզրակացություն, որ անձի մոտ կենսաբանական թերությունը անցում է կատարում հոգեբանական հարթակի: Նա գտնում էր, որ կարևոր չի իրականում առկա է ֆիզիկական թերություն, թե ոչ, կարևորը, թե անձը ինչ է զգում այդ պարագայում, ունի զգացողություն, որ ինչ- որ բան այն չէ իր անձի հետ, թե ոչ: Ադլերը գտնում էր, որ յուրաքանչյուր անձ միշտ զգում է թերարժեքության զգացում: Նա գտնում էր, որ զգացողությունների անբավարարվածությունը հանդիսանում է ազդակ անձի անհատական զարգացման մեջ:[1, 60-64]

Այսինքն հատուկ խնդիրներ ունեցող երեխաները գտնվելով պայմանական առողջ երեխաների շրջանում նրանք ձգտում են ավելիին, նորմային՝ անտեսելով իրենց օրգանական խնդիրները, որն էլ հանգեցնում է հոգեկան ներդշնակ զարգացմանը:

Պ.Պ. Բլոնսկին և Լ.Ս. Վգոտսկին

ապացուցել են, որ երեխայի հոգեկան զարգացման մեջ գլխավոր դերը պատկանում է ուսուցմանը: Ուսուցումը նրա համար է, որ տանի դեպի զարգացում, ինչպես նաև ուղղված լինի ոչ միայն երեխայի մտավոր ոլորտի ձևավորման առանձնահատկություններին , այլ նաև նրանց վրա, որոնք դեռ նոր են սկսվում ձևավորվել: [2]

Մենք գտնում ենք, որ հատուկ կարիքներով երեխաների շրջանում տագնապայնության, ագրեսիվության տարբեր մակարդակներ, ինքնարտահայտման հմտությունները, դասը պատասխանելու ցանկությունը կախված է այն շրջապատի վերաբերմունքից, տոլերանտությունից, որտեղ երեխան ուսումնառում է: Մեր դիտարկումները, որոնք իրականացվել են Երևանի մի շարք դպրոցներում, ցույց են տալիս, որ այն դասարաններում, որտեղ ուսուցիչները ցուցաբերում են առողջ մոտեցում հատուկ կարիքներով երեխաների հանդեպ, նպաստում են ուսմնառությանը, վերաբերում են երեխային որպես հասարակության լիիրավ անդամ, ապա նույն վերաբերմունքը ցուցաբերում են համադասարանցիները և նրանց ծնողները: Այս երեխաների շրջանում նկատվում է բարձր ինքնագնահատական, ակտիվ շփման, հաղորդակցման ցանկություն, չեն ցուցաբերում ագրեսիա շրջապատի հանդեպ: Կարող են հանգիստ կերպով օգնություն խնդրել շրջապատից և օգնություն ստանալ:

Իսկ այն դասարաններում, որտեղ ուսուցիչները չեն կարողանում մանկավարժական ճիշտ մոտեցում ցուցաբերել հատուկ կարիքներ ունեցող երեխաների հանդեպ, նրանց մոտ դիտվում է ցածր ինքնագնահատական, պասիվություն, որը արտացոլում է տենդենց դեպի անգործություն կամ պասիվ գործողություն ուսման հանդեպ, հաղորդակցման ցածր մակարդակ, բարձր տագնապայնություն, որը դրսևորվում է անվստահությամբ և հնարավոր ագրեսիայի սպասումով արտաքին աշխարհի կողմից, որն էլ հանգեցնում է օտարցման:Երեխան ֆիզիկապես գտնվում է հասարկության մեջ և միևնույն ժամանակ հոգեպես միայնակ է: Նմանատիպ վերաբերմունքը երեխայի մոտ ընդգծում է առկա խնդիրը, և ամենացավալին, որ երեխան վնասվում է հոգեպես: Կարելի ասել, որ ներառական կրթության իրականացման մեջ կան որոշակի դժվարություններ՝

- Խնդիրներից մեկը, որ ուսուցիչները հանդիպում են խմբային պարապմունքների ընթացքում, կայանում է նրանում, որ աշակերտները ունեն պատրաստվածության տարբեր մակարդակ և պահանջմունքներ: [3]
- Ուսուցիչները վերապատրաստված չեն դասարանում ներառելու հատուկ խնդիրներով երեխաների:
- Ուսուցիչները տեղյակ չեն իրենց դասարան ներառված հատուկ խնդիրներ ունեցող երեխաների հիվանդության առանձնահատկությունների մասին:
- Այս ամենը առաջացնում է դժվարություն ուսուցչի աշխատանքի մեջ, որն էլ բերում է հատուկ կարիքներով երեխաների մեկուսացմանը, բարձր տագնապայնությանը, ագրեսիայի, ցածր ինքնագնահատականի:
- Դասարաններում բացակայում են տեխնիկական միջոցները, որոնք կնպաստեն երեխաների արդյունավետ ուսուցմանը:

Եվ հատուկ կարիքներով երեխաների շրջանում ուսումնառությունը և ադապտացիան լինում է արդյունավետ եթե՝

- Ուսուցիչը գիտե դասարան ներառված երեխայի հոգեբանական առանձնահատկությունների մասին:
- Ճիշտ, անհատական մոտեցումները բարերար ազդեցություն են ունենում ոչ միայն հատուկ խնդրով անձի, այլ համադասարանցիների վրա՝ դասարանում:
- Ներառված երեխաներին ընդունում են ոչ միայն համադասարանցիները, այլ նրանց ծնողները:

• Այս ամենը ստեղծում է ներդաշնակ միջանձնային փոխհարաբերություններ, որն էլ նպաստում է, որ ներառված երեխան զգա իրեն ընդունված և՛ ուսուցչի, և՛ համադասարանցիների կողմից, որն էլ հանգեցնում է ադապտացմանը դասարանում, ինչպես նաև ներդաշնակ զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Саратова Л. М. Теоретический анализ проблемы изучения детей с особыми познавательными потребностями // Молодой ученый. — 2011. — №7. Т.2. — С. 60-64.
2. Óëüåíêîâà Ó.Â. Äåòè ñ çàäåðæêîé ïñèõè÷åñêîãî ðàçâèòèÿ. Íèæíèé Íîâãîðîä, 1994. – 203 ñ.
3. https://www.digis.ru/upload/iblock/500/
4. hy.wikipedia.org

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОБУЧЕНИЯ И АДАПТАЦИИ У ДЕТЕЙ С ОСОБЫМИ ПОТРЕБНОСТЯМИ

НАРИНЕ СТЕПАНЯН

Доцент кафедры прикладной психологии Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна

Статья посвящена проблеме обучения и адаптации детей с особыми потребностями. Рассматриваются особенности адаптации и эмоциональной сферы детей, интегрированных в класс, а также психологические факторы, способствующие или препятствующие адаптации и организации обучения детей с особыми потребностями.

PSYCHOLOGICAL ISSUES OF LEARNING AND ADAPTATION OF CHILDREN WITH SPECIAL NEEDS

NARINE STEPANYAN

PhD in Psychology, Associate Professor at the Chair of Applied Psychology, Khachatur Abovian Armenian State Pedagogical University

This article deals with the problems of learning and adaptation of children with the special needs. In the article, we examine the features of adaptation and emotional sphere of children that was integrated into a new class. Similarly, we examine those psychological factors that promote or prevent to adaptation and organization of studies of children with special needs in the premises of inclusive education.